ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

19 ՀՈՒՆԻՍԻ 2023 թ.
№ 8 (1106)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Պարարվեստի պատմության բացառիկ թանգարան՝ Մանկավարժականում

«Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»,- ասել է Կոմիտասը:

Մանկավարժական համալսարանի Պարարվեստի պատմության թանգարանն այլևս իրողություն է: Իր տեսակով այն բացառիկ երևույթ է Հայաստանի պատմության մեջ:

Թանգարանը բացվեց ՀՊՄՀ Պարարվեստի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարեն Գևորգյանի նախաձեռնությամբ և բուհի ղեկավարության աջակցությամբ:

Հունիսի 15-ին Կուլտուրայի ֆակուլտետում հանդիսավորությամբ թանգարանի բացման ժապավենը կտրեցին ԿԳՄՍ նախարար, համալսարանի Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը և ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Պարարվեստի մանկավարժության ամբիոնի սրահում ցուցադրված նմուշները վերաբերում էին նախաքրիստոնեական շրջանից մինչև մեր օրերը պարերի մասին վկայություններ պարունակող ցուցանմուշներ՝ քարե ժայռապատկերներ, որոնց վրա տեսանելի են պարային շարժումներով մարդիկ, հայկական պարի ուսումնասիրության առանցքային ուղղություն համարվող և առանձին մշակույթ հանդիսացող հանդերձանք՝ տարազներ, պարի մասին տեղեկություններ պարունակող ձեռագիր ավետարաններ, Նոր կտակարան և այլն:

Թանգարանն իր արժեքավոր նշանակությամբ խորհրդանշում է հայ պարի ընթացքն ու նվաճումները:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց բոլորին նախաձեռնության իրականացման կապակցությամբ՝ փաստելով. «Ստեղծվել է մի սոցիալական միջավայր, որտեղ ուսանողը կրթության մասնագիտական բաղադրիչի հետ մեկտեղ հնարավորություն ունի պատմամշակութային հետազոտական հմտությունները զարգացնելու լուրջ մասնագետների և այն տիրույթի մասնագիտական շրջանակներում, որը կրկնակի նպաստելու է անձնային և մասնագիտական որակների զարգացմանը»:

Ռեկտորը նկատեց՝ հայ պարը հայ ժողովրդի անցյալի լավագույն ապացույցն է, իսկ այստեղ ստեղծված սոցիալական միջավայրը այն լավագույնն է, որ համալսարանը կարող է անել իր ուսանողների համար:

Սրբուհի Գևորգյանը պարային բաժնի ուսանողներին մաղթեց՝ նոր որակով ու նոր ոգեշնչումով ներկայացնեն իրենց պարային տիրույթի ձեռքբերումները:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը խոսեց թանգարանների մասին՝ որպես կրթական-մշակութային տարածքնեի, նկատելով, որ սա մի հնարավորություն է և մի տեղ, որտեղ կարող են մեկտեղվել կրթությունը, հետագա մասնագիտական և գիտական գործունեությունը:

Նախարարն անդրադարձավ թանգարանում կրթության ու մշակույթի միասնությանը, խոսեց նաև գեղարվեստական կրթության մասին՝ որպես նրա բաղադրիչ, այն անվանելով «հանրային կրթություն, առանց որի չենք կարող ունենալ ստեղծագործող, նախաձեռնող քաղաքացիներ, որովհետև ստեղծագործությունն է մեզ մղում՝ հաղթահարելու դժվարությունները: Պարն է, որ ցույց է տալիս՝ ինչպես կարելի է մարմնակրթությունը դարձնել արվեստ: Այս առումով պարի թանգարանը ստեղծել է մի յուրահատուկ միջավայր՝ նորանոր ծրագրերի և մակարդակների համար»:

Պրոֆեսոր Ամատունի Վիրաբյանն ասաց. «Պարը ստեղծվել է այն պահից, երբ հանդես է եկել բանական մարդը, ապա անցել է հազարամյակներ»:

Պրոֆեսորը խոսեց մեզանում պարարվեստի զարգացմանը 20-րդ դարում, ապա կարևորեց նորաստեղծ թանգարանի նշանակությունը՝ հայ պարարվեստի նվիրյալների և ուսանողներին մաղթելով հաջողություն:

Պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանն անդրադարձավ հայ ժողովրդի պատմամշակութային ձեռքբերումներին՝ այդ համատեքստում ընդգծելով պարի պատմության թանգարանի առաքելությունը:

«Մենք այսօր ստեղծեցինք մի թանգարան, որն իր գործնական և կիրառական նշանակությամբ կայուն դաշտ է ստեղծելու նոր սերնդի համար՝ հնարավորություն տալով ուսումնասիրելու ժայռապատկերներից մինչև մեր օրոյա պարավեստն ընկած երեքհազարամյա զարգացման ճանապարհը»,-ասաց պրոֆեսոր Կարեն Գևորգյանը:

Ներկաները դիտեցին պարային բաժնի ուսանողների հետաքրքիր կատարումները՝ ըմբոշխնելով հայկական պարի գեղեցիկ ռիթմերն ու պարգևած զգացողությունները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Մեր գործը շարունակական է, մեր առաքելությունը՝ նվիրական, իսկ մեր նպատակները՝ ազնիվ ու առաջանցիկ»,–

ասում է ՀՊՄՀ պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը

- Տիկին Սաֆարյան, ավարտվեց 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման քննությունները: Ինչպե՞ս կգնահատեիք գործընթացը:

- Այս տարի բակալավրիատի 35 մասնագիտություններով առկա ուսուցման համակարգում ավարտեց 598, իսկ մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 53 մասնագիտություններով՝ 232 ուսանող, իսկ բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում՝ 478, մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում՝ 88 շրջանավարտ: Ցանկանում եմ նշել, որ ընդհանուր առմամբ, քննաշրջանն անցել է հարթ, ուսանողակենտրոն մթնոլորտում, ունեցել ենք մի քանի բողոքարկումներ, որոնք հիմնականում ստացած արդյունքի լրացուցիչ մեկնաբանություններին էին վերաբերում, ինչը կանոնակարգով նույնպես սահմանված է: Ընդհանուր տպավորությունը դրական էր, սակայն նկատել ենք նաև որոշ բացթողումներ, որոնք նախանշվել են՝ մեր կողմից հետագայում դրանք վերանայելու համար: Նշեմ նաև, որ այս տարվա շրջանավարտների ուսումնառությունն ընթացավ բարդ ժամանակահատվածում՝ համավարակ, պատերազմ, ինչն անտարակույս, իր հետքը թողել է մեր շրջանավարտների կյանքում:

- Արդյո՞ք ուսանողների ստացած միավորներն ուղիղ համեմատական են նրանց գիտելիքներին:

- Գիտեք, կդժվարանամ հիմա միանշանակ պնդել Ձեր ասածը, սակայն 100 միավորանոց սանդղակը, որը կիրառվում է մեր բուհում, հնարավորություն է տալիս տարբերակված մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր շրջանավարտին: Ունեցանք ամենատարբեր արդյունքներ՝ նվազագույնից մինչև առավելագույն, նվազագույն պատրաստվածից մինչև ամենալավագույն պատրաստվածներ: Ուրախալի է հենց այն փաստը, որ այսօր ունենք բազմաթիվ գերազանց պատրաստված շրջանավարտներ, ովքեր արդեն պատրաստ են մտնել դպրոց և կրել ուսուցչի ամենաբարձր կոչումը:

- Ասում են՝ թվերի հետևում երևույթներ են... Ի՞նչ իրողություններ բացահայտեցիք թվային վիճակագրությունից:

- Ինչպես արդեն նշեցի, այս տարի մանկավարժական մայր բուհն ունեցավ ավելի քան 1396 շրջանավարտ առկա և հեռակա ուսուցման բոլոր ձևերում: Ինչ խոսք, թվերը խոսուն են, առավել ևս այն պարագայում, որ շրջանավարտների մի զգալի մասը բուհն ավարտեց բարձր առաջադիմությամբ: Սակայն այդ թվերն առավել խոսուն կլինեն այն պարագայում, երբ 1396 շրջանավարտի գերակշիռ մասը մնա իր առաքելությանը հավատարիմ՝ մուտք գործի կրթական համակարգ: Այստեղ է, որ մենք՝ մանկավարժական հասարակության ներկայացուցիչներս, մեծ անելիքներ ունենք դեռևս հասարակության մեջ բարձրացնելու մանկավարժի իմիջը:

- Ինչպիսի՞ն է Մանկավարժական համալսարանն ավարտող շրջանավարտը. որակական ի՞նչ բնութագիր կտաք մեծամասնությանը:

-Շատ հետաքրքիր հարց եք բարձրացնում, փորձեմ բնութագրել այսօրվա մեր շրջանավարտին.

-պրոֆեսիոնալիզմ. Մանկավարժական համալսարանի շրջանավարտներն ունեն մասնագիտական բարձր մակարդակ: Նրանք ստանում են մասնագիտական խորը և համակողմանի կրթություն, տիրապետում են մանկավարժական գիտության տեսական և գործնական հմտություններին՝ ապագա սերունդներին արդյունավետ կրթություն և դաստիարակություն տալու համար:

-կարեկցանք և փոխըմբռնում. Մանկավարժական համալսարանի շրջանավարտներն այսօր ցուցաբերում են բարձր պատրաստականություն՝ ունենալով դիմացինի կարիքները և հուզական վիճակը հասկանալու կարողություն: Նրանք կարողանում են արձագանքել յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներին, ստեղծել աջակցող և ապահով միջավայր ուսումնական գործընթացում:

-մասնագիտական բարձր պատասխանատվություն. Մանկավարժական համալսարանի շրջանավարտները գիտակցում են իրենց դերի կարևորությունը երեխաների անհատականության ձևավորման գործում: Նրանք ունակ են ապահովել որակյալ կրթություն, պահպանել էթիկական սկզբունքները:

-հաղորդակցման հմտություններ. Մանկավարժական համալսարանի շրջանավարտներն ունեն հաղորդակցման գերազանց հմտություններ, ինչը թույլ է տալիս արդյունավետ շփվել երեխաների, նրանց ծնողների, գործընկերների և ուսումնական գործընթացի այլ մասնակիցների հետ: Նրանք ունակ են բացատրել բարդ հասկացությունները և կառուցողական երկխոսություն վարել: Տեխնոլոգիապես զինված են ու նորարար:

-շարունակական զարգացում. Մանկավարժական համալսարանի այսօրվա շրջանավարտները ձգտում են շարունակական զարգացման՝ որպես մասնագետներ: Նրանք պատրաստ են սովորել նոր մեթոդներ, կիրառել նորարարական մոտեցումներ կրթական պրակտիկայում և մշտապես կատարելագործել իրենց հմտությունները մասնագիտական ուսուցման և ինքնակրթության միջոցով:

Ընդհանուր առմամբ, այսօրվա մեր սերնդին կարելի է բնութագրել որպես բարձր որակավորում ունեցող, կարեկցող, պատասխանատու և տեխնոլոգիապես զինված մասնագետներ, ովքեր ձգտում են շարունակական մասնագիտական զարգացման, առաջխաղացման և նոր նվաճումների:

- Ի՞նչ խնդիրներ բացահայտվեցին ավարտական թեզերի պաշտպանության ընթացքում: Դրանք լուծելի՞ են:

- Իհարկե, ամեն բան էլ լուծելի է, եթե կա կամք, եթե առկա է հստակ ձևակերպված նպատակ ու առաջադրված են նպատակին հասնելու ուղիները, ինչն այսօր ակներև է մեր բուհի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մոտ: Մտահոգություն առաջացրին որոշ աշխատանքներ, որոնց դեպքում շրջանավարտը ոչ լիարժեք էր պատրաստված, երբեմն էլ լինում էին նաև հաղորդակցման, ներակայացման խնդիրներ, սակայն, դրանք այնքան եզակի դեպքեր էին, որ ամբողջի մեջ գրեթե չէին հիշվում: Իսկ կոնկրետ ինձ համար, որպես ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, այս գործընթացը տվեց հնարավորություն ներսից դիտարկելու բացերը՝ դրանք հետագայում շտկելու համար: Ամփոփելով նշեմ, որ վերհանված խնդիրները շատ անհատական էին և կախված կոնկրետ աշխատանքից: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ ճիշտ նախապատրաստման, հետադարձ կապի և ղեկավարների հետ խորհրդակցելու դեպքում այս խնդիրներից շատերը կարող էին նաև չլինել:

- Ի՞նչ է քննությունը կամ քննաշրջանը ուսանողի և դասախոսի համար:

- Գիտեք, այս հարցի պատասխանը շատ դժվար է, քանի որ «մեդալն» ունի երկու կողմ. ուսանողի համար քննությունը մի իրավիճակ է, երբ նա պետք է առավելագույնս ցուցադրի իր գիտելիքները և ստացած տեղեկատվությունն ու հմտությունները կիրառելու կարողությունը: Դասախոսի համար քննությունը ուսանողների գիտելիքները ստուգելու և գնահատելու միջոց է, ուսանողին նորովի բացահայտելու ևս մեկ հնարավորություն: Երկու կողմերի համար էլ այս գործընթացը կարևորագույն և պատասխանատու իրադարձություն է հորդորս է կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին՝ վերաբերվել քննական գործընթացին առավելագույն պատասխանատվությամբ. չէ՞ որ ուսանողի առաջադիմության հիմնական ցուցիչը թվային տեսքով ձևավորվում է հենց քննաշրջանում:

- Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

- Կուզենայի ևս մեկ անգամ շնորհավորել մեր բոլոր շրջանավարտներին իրենց կյանքի կարևորագույն շրջափուլի ավարտի կապակցությամբ: Լիահույս եմ, որ նրանցից շատերին հետագայում կհանդիպեմ մեր կրթական համակարգում: Գիտեք, ամեն անգամ, երբ հանդիպում եմ մեր շրջանավարտին, մի տեսակ հպարտության զգացողություն է առաջանում, որ մեր գործը շարունակական է, մեր առաքելությունը՝ նվիրական, իսկ մեր նպատակները՝ ազնիվ ու առաջանցիկ:

Հարցազրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ



Երկօրյա համաժողով

Երևանում անցկացվեց «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝ տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» հայ-ռուսական գիտակրթական երկօրյա համաժողովը: Ֆորումի ընթացքում քննարկվեցին հայ-ռուսական համագործակցության ընդլայնմանը, բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում երկու երկրների առաջատար հաստատությունների միջև հաջողված փորձի փոխանակմանը, ինչպես նաև գիտության բնագավառում համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող մի շարք հարցեր:

Ֆորումին մասնակցում էր 200 պատվիրակ, այդ թվում նաև՝ ռուսական բուհերի ռեկտորներ. նրանք հայաստանյան մի քանի բուհերի հետ ստորագրեցին համագործակցության հուշագրեր:

Այդ շրջանակներում համագործակցության հնգամյա հուշագիր ստորագրվեց Մանկավարժական համալսարանի և ՌԴ Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի միջև: Հուշագիրը ստորագրեցին մանկավարժական բուհերի ռեկտորներ Սրբուհի Գևորգյանն ու Եվգենի Նիժնիկը:

Հուշագրի համաձայն՝ կիրականացվեն մի շարք ծրագրեր, միջոցառումներ, մասնավորապես՝ ուսանողների և դասախոսների փոխանակում, մասնագիտական պրակտիկայի կազմակերպում, վերապատրաստումներ: Հայ և ռուս գործընկերները կկազմեն նաև համատեղ կրթական ծրագրեր, կիրականացնեն գիտահետազոտական նախագծեր, գիտական աշխատանքներ, ինչպես նաև երկուստեք կմասնակցեն գիտական և գիտամեթոդական սեմինարների, կոնֆերանսների, սիմպոզիումների:

Մանկավարժական բուհերի ռեկտորներ Սրբուհի Գևորգյանը և Եվգենի Նիժնիկը հույս հայտնեցին, որ համագործակցության հուշագիրը երկուստեք կլինի արդյունավետ և փոխշահավետ՝ ի նպաստ մանկավարժական բարձրագույն կրթության և գիտության զարգացման:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Աշխատանքային այց Չեխիա

Հունիսի 5-9-ը ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսական պատվիրակությունն աշխատանքային այցով Չեխիայի Պարդուբիցե համալսարանում էր: Այցի ընթացքում իրականացվել են ներառական կրթության ոլորտի բարելավմանն ուղղված համատեղ աշխատանքներ. վերանայվել են կրթական ծրագրերը, քննարկվել հետազոտական աշխատանքները, տարբեր այցելություններ իրականացվել:

Կրթական երկու կառույցների համագործակցության շրջանակներում հրատարակման է պատրաստ Հայաստանի և Չեխիայի ներառական կրթության համեմատության վերաբերյալ պարբերականը, որտեղ ներկայացված են այդ ոլորտում երկու երկրների օրենսդրական կարգավորումները, գործնական ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև առաջատար մասնագետների փորձը:

Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքի հաջորդ փուլի վերաբերյալ: Նախատեսվում է համագործակցության առավել նեղ ուղղվածություն, մասնավորապես՝ սեպտեմբերին սպասվում է Պարդուբիցեի համալսարանի մասնագետների այցելությունը ՀՊՄՀ, որի ընթացքում հատուկ կարիքներով երեխաների ընտանիքների հետ աշխատանքներ կիրականացվեն կրթական, սոցիալական ոլորտում, որոնց արդյունքները տեղ կգտնեն հաջորդ գիտական աշխատության մեջ:

Ի դեպ, Չեխիայի Պարդուբիցեի համալսարան այցելած պատվիրակության կազմում էր նաև ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար, ՀՊՄՀ Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Արաքսիա Սվաջյանը: Նա առավել ընդգրկուն ներկայացրեց ոլորտի խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ տեսակետներ, որոնք առաջադրվել էին Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության համատեքստում:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Յակուբ Բոռնիոյի այցը Մանկավարժական

Մայիսի 29-ից հունիսի 2-ը էրազմուս+ ծրագրով Մանկավարժական համալսարանում հյուրընկալել էին Լեհաստանի Վրոցլավի համալսարանի Եվրոպական կրթության ֆակուլտետի դոկտոր Յակուբ Բոռնիոյին:

Դոկտոր Յակուբ Բոռնիոն անվտանգային հարցերի մասնագետ է, նա Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում հանդես եկավ «Հարավային Կովկասը Լեհաստանի՝ արևելյան քաղաքականության մեջ» թեմայով դասախոսությամբ:

Նա խոսեց Լեհաստանի և նրա որդեգրած հիմնական սկզբունքների մասին՝ Եվրամիության արտաքին քաղաքականության համատեքստում անդրադառնալով անվտանգային հարցերին, հայ-լեհական դարավոր կապերին:

Դոկտոր Յակուբ Բոռնիոն առաջին անգամ է Հայաստանում, բայց հասցրել է սիրել հայ մշակույթն ու հիացել հայկական հյուրընկալությամբ, դասախոսական կազմի հետ հանդիպումների ընթացքում փորձում է ծանոթանալ մեր երկրի պատմությանը, նաև ընդգծում երկու ժողովուրդների ընդհանրությունները:

Դեկան Էդգար Հովհաննիսյանը կարևորեց լեհ դոկտորի այցը, որը նաև հանդիպեց դասախոսական կազմի հետ և քննարկեց Եվրամիության, արտաքին քաղաքականության, տարածաշրջանի, էթնիկ կոնֆլիկտների վերաբերյալ հարցեր:

Մանկավարժական համալսարանում հյուրընկալեցին Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությանը

Մանկավարժական համալսարանում հունիսի 15-ին հյուրընկալեցին Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությանը՝ բուհի Գիտահետազոտական և նորարարական գործունեության գծով պրոռեկտոր Վետրով Յուրի Պավլովիչին, Նախագծային գրասենյակի ղեկավար Գաբիսով Ալան Գեորգևիչին, Պատմության ամբիոնի վարիչ Գրիցկիխ Իգոր Վլադիմիրովիչին և Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Նիկուլնիկովա Յանա Անատոլևիչին:

Պատվիրակությանն ընդունեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Հանդիպմանը մասնակցում էին ՀՊՄՀ Ուսումնագիտական աշխատանքների պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Պատվիրակության անդամները հանգամանորեն ներկայացրին իրենց համալսարանի ուղղվածությունը, մասնագիտությունները, հաջողություններն ու ձեռքբերումները, նաև հանդես եկան որոշ ուղղություններով համագործակցելու առաջարկություններով՝ մանկավարժահոգեբանական մասնագիտությունների գծով ապագա մանկավարժների պատրաստման, երիտասարդ դասախոսների վերապատրաստման, հիմնական կրթական ծրագրերի մեջ ապագա մանկավարժների ինքնակրթությանն ու ինքնազարգացմանը նպաստող հատուկ դասընթացների և նախագծերի ներդրման, մագիստրոսական կրթական համակարգում ուսանողների փոխանակման ու դիպլոմների փոխճանաչման, ուսանողների գիտական աշխատանքների, համատեղ հետազոտությունների ու պրակտիկաների կազմակերպման, բանավեճի միջազգային ակումբին մասնակցության, ռուսաստանյան համալսարանում հայագիտության ամբիոնի բացման և այլ հարցերի շուրջ:

Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի Գիտահետազոտական և նորարարական գործունեության գծով պրոռեկտոր Վետրով Յուրի Պավլովիչն առաջարկեց մագիստրատուրայի դասընթացների կազմակերպման օնլայն տարբերակ: ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն ընդգծեց, որ բուհը տարբեր ձևաչափերով համագործակցում է ռուսաստանյան մի շարք բուհերի հետ, բոլոր դեպքերում անհրաժեշտ է համագործակցության կոնկրետ քայլերի գործնական ամրագրում: Պրոռեկտորն առաջարկեց գործակցության մի քանի ուղղություններ, այդ թվում՝ մասնակցել մեր համալսարանի «Ամառային դպրոց» ծրագրին, իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր և այլն:

Ռուս գործընկերները վստահ են՝ համատեղ հարթակում կարելի է իրականացնել ամենատարբեր նախագծեր՝ ուսանողական կոնֆերանսներից մինչև մեդիա նախագծեր:

Պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց ՀՊՄՀ Ռուսաց լեզվի ամբիոնի ներուժը, նրանց հետ համագործակցելու ուղիներ մատնանշեց:

Ռուս գործընկերները ակնկալում են մեթոդական աջակցություն, և պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը վստահեցրեց՝ մենք պատրաստ ենք աջակցել և համագործակցել բոլոր այն ուղղություններով, որոնք կնախանշվեն երկուստեք:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

Ապագան կերտողը ուսուցիչն է

Պետության ապագան կերտողներից մեկը ուսուցիչն է, և «յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն»:

Մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնը հունիսի 1-ին անցկացրեց «Մանկավարժություն» առարկայից համահամալսարանական օլիմպիադայի եզրափակիչ փուլը: Քարոզներով հանդես եկան բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող 3 ուսանող և մագիստրատուրայի 5 ուսանող, որոնք ընտրվել էին ըստ քարոզների գնահատման չափանիշների: Հաղթող էր ճանաչ-

վելու 100 միավոր ստացած ուսանողը:

Ներկաներին շնորհավորեցին և օրվա խորհուրդը կարևորեցին ՀՊՄՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը և Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը:

Պրոռեկտորը մաղթեց, որ երեխաներն անվտանգ ու խաղաղ երկրում մեծանան, նրանց դասավանդեն լավ ուսուցիչներ:

«Երեխան մարդ է և ընկեր» խորագրով քարոզների ուղերձները տարբեր էին՝ դրանք ուղղված էին երիտասարդ ուսուցիչներին և բարձր դասարանցիներին:

21-րդ դարը մարտահրավերների դար է, պետք է նորովի ընկալել երեխաներին և նրանց ցանկությունները: Այս համատեքստում հետաքրքիր ու բազմազան էր ուսանողների ասելիքը:

«Պետք է կարևորել երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլ, չբավարարվել սոսկ չոր գիտելիքներ հաղորդելով, այլ նրանց մեջ ձևավորել մարդկային բարձր արժեքներ»,-ասաց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Գոհար Ճշմարիտյանը: Ելենա Գրիգորյանն էլ ներկա ու ապագա մանկավարժներին հորդորեց առաջ գնալ ժամանակին համահունչ՝ հենվելով ազգային արժեքների վրա, ապա հավելեց. «Աշակերտը անոթ չէ, որ պետք է լցնել, այլ ջահ, որ պետք է վառել ու վառ պահել...»:

«Մանկավարժի դերի ու գործունեության նկատմամբ նեղ ընկալումը կարող է սահմանափակել ձեզ և ձեր մանկավարժական գործունեության տիրույթը, սակայն, բոլոր իրավիճակներում հավատացեք երեխաների հնարավորություններին, որոնք առաջ են գալիս մանկավարժական ազդեցությունից»,-ասաց Սոնա Բաղդասարյանը:

«...Ուսուցիչը երեխային տալիս է հոգի, բարի կամք և իդեալներ,-մեջբերեց Լալա Ստեփանյանը:-Դարձի՛ր այդ ուսուցիչը»,-հորդորեց նա:

Աշխատող և ապագա ուսուցիչների հորդոր-քարոզները մերօրյա էին՝ սիրել ու վստահել երեխային, դառնալ նրա ընկերը, չվախենալ դժվարություններից, երեխայի մեջ սերմանել հայրենասիրություն ու մարդկային բարձր որակներ:

ՀՊՄՀ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ողջունեց նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ այն ավանդույթ է դարձել: Պրոռեկտորը կարևորեց դասախոս-ուսանող համագործակցությունը՝ հավելելով, որ նման հարթակները լավագույն հնարավորությունն են՝ լսելու ուսանողներին: Նաև վստահեցրեց՝ նման գործընթացները լինելու են շարունակական:

Մանկավարժության ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին՝ ընդգծելով, որ «յուրաքանչյուր քարոզի մեջ մեզ համար ընդունելի գաղափարներ ու մտքեր կային»: Ա. Թոփուզյանը նկատեց. «Անցյալ տարվա ուղերձների հետքերն այսօր նկատելի էին. նշանակում է դրանք պահի ազդեցությամբ չէին ծնվել: Դրանք այսօր պետք է դպրոց տանեք և մեր ավագ դպրոցականներին դրանցով ոգևորեք»:

Աիդա Թոփուզյանը հատկապես տպավորված էր երիտասարդ ուսուցիչներին ուղղված քարոզներից. դրանք մեկ անգամ ևս փաստեցին, որ երեխան բարձրագույն արժեք է, ոչ մի երեխա մյուսին նման չէ, ամեն երեխա ինքնատիպ է, ինչը նշանակում է՝ մանկությունը ժամանակավոր երևույթ չէ, այն դնում է մարդու հետագա կյանքի հիմքը:

Օլիմպիադայի մասնակիցներից լավագույններին ընտրեց գնահատող հանձնաժողովը՝ 1-ին պատվավոր տեղին արժանացնելով Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի Լալա Ստեփանյանին: 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողուհի Սոնա Բաղդասարյանը և Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրիատի ուսանողուհի Էլեն Գաբրիելյանը: Մրցանակակիրներին հուշանվերներ հանձնեցին, իսկ բոլոր մասնակիցներին՝ հավաստագրեր:

Օրը նշանավորվեց նաև դպրոցականների ելույթներով, որոնք ուսուցիչներին խոստովանեցին իրենց սերը, բայց նաև «խորհուրդ տվեցին» սիրել, հասկանալ երեխաներին և երբեք չպատժել:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Պրակտիկայի ամփոփում ցուցահանդեսով

Մանկավարժական համալսարանի տարբեր ֆակուլտետների 2-3-րդ կուրսերի ուսանողները ներկայացրել էին մանկավարժական պրակտիկայի ընթացքում ստեղծած դիդակտիկ աշխատանքները: Ուսանողները խոսեցին դրանց կիրառման ձևերի ու նպատակների, նաև ուսուցման ընթացքը հետաքրքիր ու դյուրին դարձնելու անհրաժեշտության մասին:

Ցուցահանդեսը հագեցած էր ձեռագործ տիկնիկներով, տառադարաններով, պատկերազարդ տետրերով ու բառագրքերով, քարտային աշխատանքներով, պաստառներով ու այլ դիդակտիկ պարագաներով:

Ամեն տարի ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնը պրակտիկայի ամփոփումը կազմակերպում է նման ցուցահանդեսով, ուր ուսանողները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը, իսկ դասախոսները քննարկում պրակտիկայի գործընթացի լավ ու վատ կողմերը, համատեղ վերլուծում հետաքրքիր աշխատանքները, նրբորեն դիտարկում թերություններն ու

դրանց վերացման ուղիներ առաջարկում:

Ապագա մանկավարժները խոստովանեցին՝ պրակտիկան հնարավորություն տվեց իրենց հանդես գալ ստեղծագործական նախաձեռնողականությամբ, դիդակտիկ նյութերով էլ կզարգացնեն երեխաների ինքնուրույն մտածողությունը, քարտային խաղերով կխթանեն ուսուցումը, դասարանում կստեղծեն ակտիվ ու հետաքրքիր միջավայր՝ երեխաների համար առավել գրավիչ մեթոդներ կիրառելով:

«Ցուցահանդեսը յուրահատուկ հաշվետվություն է և փորձի փոխանակման լավագույն հարթակ»,-ասաց Մանկավարժության ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանը՝ ընդգծելով, որ այն նպաստում է ուսանողների ստեղծագործականության ու նախաձեռնողականության զարգացմանը: Ամբիոնի վարիչը վստահեցրեց՝ ապագա ուսուցչի ձևավորման գործում պրակտիկան կարևոր դեր ունի, նաև ընդգծեց այն հավուր պատշաճի կազմակերպելու անհրաժեշտությունը:

Պրակտիկայի արդյունքում ստեղծված ցուցահանդեսն ուսանողներին օգնեց նոր գիտելիքներ ձեռք բերել, թիմային աշխատանքում դրսևորվել, միասին հաղթահարել դժվարությունները, ամրացնել կամային որակները, սովորել սխալներից և այդ ամենի համատեքստում դասախոսների առաջ ներկայանալ ինքնատիպ հաշվետվողականությամբ:

Կախարդական ճամփորդություն

Մենք բոլորս գալիս ենք մեր մանկությունից՝ ասում է Անտուան դե սենտ Էքզյուպերին: Թերևս մանկությունը յուրաքանչյուրիս կյանքի ամենավառ ու գունեղ շրջանն է, որին հրաժեշտ տալն անչափ դժվար է...

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում համալսարանական № 57 հիմնական դպրոցի 4բ դասարանի ավարտական հանդեսն էր, որը համընկավ հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան: Հրաժեշտը և տոնական տրամադրությունը միախառնվել էին բեմի վրա՝ դարձել երգ, ասմունք ու պար, չորս տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքների ստուգատես:

Մի կախարդական վրձին բոլորի անունները գրեց առաջին դասարանի դասամատյանում, և սկսվեց կախարդական ճամփորդությունը գիտելիքների աշխարհում՝ ըստ դասարանների... Ահա և ավարտեցին 4-րդ դասարանը. ավարտական հանդեսի վերջին «փորձն է» բեմի վրա. ի՞նչ տվեց այն երեխաներին, հենց այդ էլ փորձում են ներկայացնել:Նրանք «Դպրաստանի» բնակիչներն են, որ գնացքով ուղևորվում ու ճամփորդում են «Մայրենաշեն», «Բառաշատ», «Թվաբանիա», «Աշխարհաշեն» և մյուս վայրերով, հիանում յուրաքանչյուրով, բացահայտում ու հիշում իրենց անցած դասերը տարբեր առարկաներից, վերադարձնում են «գրատախտակին» ու «պրոեկտորին», առանց որոնց ոչինչ չեն կարող անել, որովհետև «ամեն ինչ գլխիվայր շրջվել է»:

Բեմում հայտնվում է մեծ ու գունավոր գնացքը, և սկսվում է ճամփորդությունը տարբեր աշխարհներում՝ գիտելիքների աշխարհում «Այբբենարանի» ուղեկցությամբ: Յուրաքանչյուր դասամիջոցն էլ անց են կացնում մի կանգառում: Առաջին կանգառը «Դպրաստանի» մայրաքաղաքն է: Երեխաները երգում են՝ «Մենք ՀՊՄՀ № 57 դպրոցի սաներն ենք, ճանաչեք մեզ», փորձում են հասկանալ՝ գիտելիքներից ո՛րն է ամենակարևորն ու ամենագլխավորը...

Բեմի վրա իրար հակադրվում են «հոմանիշն» ու «հականիշը», «Հեքիաթաշատի» փողոցներում հանդիպում Թումանյանի հեքիաթների հերոսներին, մի այլ քաղաքում՝ առոգանության նշաններին, իսկ «Մեղեդելլա» փողոցում՝ երգ, երաժշտության հանդեսի մասնակցում... և այսպես շարունակ: Չորրորդցիները յուրօրինակ

բեմադրություն են ներկայացնում, որի ընթացքում հանդիպում են դպրոցի իրենց սիրելի առարկաներին ու մանկության հերոսներին, հանդես գալիս լրատվական դաշտում... Ապա ամփոփում երգով՝ մեր դպրոցը մենք ենք...

Ցավոք, ամեն ինչ իր ավարտն ունի, ավարտվում է և այս կախարդական ճամփորդությունը, բայց կշարունակվեն ուսումնառության օրերն ու տարիները համալսարանական № 57 դպրոցում, որը մի նոր կյանքի սկիզբ կդառնա:

Դպրոցականները շնորհակալություն են հայտնում դասվար Մարիամ Ենոքյանին՝ իրենց հոգիներում ազնվություն, բարություն, մարդասիրություն, հայրենասիրություն և գիտելիքների հանդեպ սեր սերմանելու համար... Դասվարն էլ շնորհավորում է երեխաներին՝ տոնական օրվա կապակցությամբ և փաստում՝ դուք ինձ այս չորս տարիների ընթացքում ձեր հեքիաթային ճամփորդության մի մասնիկն եք դարձրել...

Տնօրեն Նաիրա Տողանյանն իր հիացմունքն է արտահայտում գեղեցիկ ու ճաշակով ներկայացրած աշխատանքի համար, վստահ, որ կուռ թիմ է ձևավորվել, փոքր, բայց մեծ ներուժ ունեցող դասարան, որն այսուհետ ևս նոր հաջողություններ է ամրագրելու:

Ծնողներին փոխանցված զգացողությունները անկարագրելի են. նրանք երկար կկրեն իրենց մեջ օրվա գունեղ տպավորությունները:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հայրենիք-Սփյուռք

Քարի պես պինդ և հայոց հողի պես փխրուն

Հայ ազգային ինքնության պահպանումն օտար ափերում, հայազգի մանուկներին հայեցի կրթելու, դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից լինելու ձգտումը մշտապես եղել և մնում է մեր ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչ մասը: Դարեր շարունակ օտար տիրապետողների լծի տակ գտնվելը, ազգային ինքնության կորստի մշտական սպառնալիքը, ձուլման, ուծացման վտանգը մեր գիտակցության մեջ առանձնահատուկ մոտեցում ու վերաբերմունք է առաջացրել հայապահպանման կարևորագույն ինստիտուտի՝ հայ ազգային դպրոցի հանդեպ: Այդ է պատճառը, որ Սփյուռքի հայ գաղթօջախներում մեծ ուշադրություն է դարձվում ազգային դպրոցների ստեղծմանը: Ազգապահպան այս գործին իրենց մասնակցությունն են բերում հայ նվիրյալները, որոնք գործադրում են բոլոր ջանքերը, որ «Սուրիո ավազին, Փարիզի մայթին, Նեղոսի ափին, Ռուսիո անծայրածիր տարածքում» հայկական ազգանուն կրող մանչուկները և մայրենի լեզվին չտիրապետող չափահասները կարողանան գրել, կարդալ ոսկեղենիկ մեսրոպյան տառերով, որ և՛ ֆրանսիահայը, և՛ ամերիկահայը, և՛ գերմանահայը, և՛ ռուսահայն ու «աստղահայը» խոսեն մեր ազնվագույն հայերենով:

Մոսկվայի Համազգայինի Լևոն Շանթի անվան հայկական կիրակնօրյա դպրոցում ավարտվեց հերթական ուսումնական տարին: Դպրոցը գտնվում է Բուտովո թաղամասում, սակայն մեզ մոտ են հաճախում հայ մանուկներ տարբեր թաղամասերից: Երեխաների մի մասը խոսում է հայերեն, մի մասն էլ կրում է միայն հայկական ազգանուն: Դպրոցում սովորեցնում ենք գրել, կարդալ, թեմատիկ բառերով հարստացնում ենք նրանց բառապաշարը: Ունենք հեքիաթի ժամ, երեխաները դերերով բեմականացնում են մեր հայկական հեքիաթները: Դրանով փորձում ենք թատերական արվեստին մոտեցնել նրանց: Բոլորն էլ հաճույքով են հաճախում դպրոց, սրտի թրթիռով են մասնակցում հանդեսներին և միջոցառումներին: Քարի պես պինդ և հայոց հողի պես փխրուն է մեր աշակերտների սերը հայրենիքի հանդեպ: Մեր ուսուցչական կազմը ջանք ու եռանդ չի խնայում նրանց հայեցի դաստիարակելու, նրանց հոգում հայի ու հայկականացման ոգին ամուր պահելու գործում:

Լալա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Համազգայինի Լևոն Շանթի անվան կիրակնօրյա հայկական դպրոց
ՌԴ, Մոսկվա

35-րդ հոբելյանական «Վերջին զանգը»

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ 35-րդ հոբելյանական «Վերջին զանգը», որն ամփոփեց 2022-2023 ուսումնական տարին: Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր նախկին Լազարյան ճեմարանի, ներկայիս՝ ՀՀ դեսպանության հանդիսությունների մեծ դահլիճում: Երեսունհինգ տարի դպրոցը պահպանում է իր ավանդույթները, և ամեն կիրակի երեխաներն այստեղ սովորում են ոչ միայն հայոց լեզու, երգ և պար, այլև ծանոթանում են հայոց պատմության փառահեղ էջերին, մշակութային արժեքներին, հանդիպում են ակնառու գործիչների հետ, ովքեր իրենց ավանդն ունեն մեր պատմական երկրի զարգացման գործում:

Միջոցառման պաշտոնական մասը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրհներգով, որից հետո հանդես եկավ ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանության արտակարգ դեսպանորդ, լիազոր նախարար Աստղիկ Բալդրյանը, ով փոխանցեց Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վաղարշակ Հարությունյանի շնորհավորական ուղերձն ու դեսպանի անունից շնորհակալագրեր հանձնեց դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանին, ուսուցչական համակազմին, մասնավորապես՝ հայոց լեզվի ուսուցչուհի Աննա Հովհաննիսյանին, հայագիտության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանին, երաժշտության ուսուցչուհի Արփինե Սամվելյանին, ժողովրդական պարերի ուսուցչուհի Նանե Մարգարյանին, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ Իրինա Շվեցովային:

Դպրոցի պատվոգրերի շարքը համալրվեց նաև ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության շնորհակալագրով առ այն, որ 35 տարի անընդմեջ այս կրթօջախը հայոց գիրն ու գրականությունը, պատմությունն ու ավանդույթներն է փոխանցել հայրենիքից հեռու ապրող սերունդներին: Այդ ամենի ականատեսը եղան ոչ միայն աշակերտների ծնողները, այլև բազմաթիվ պատվարժան հյուրեր, ովքեր իրենց բարեմաղթանքները հղեցին տնօրենին և ուսուցիչներին:

Նշենք, որ դպրոցը գործում է 1988 թվականից. ստեղծվել է Մոսկվայում և Մոսկվայի հայկական սփյուռքի, Հայաստանի մշտական ներկայացուցչության նախաձեռնությամբ, ՀԽՍՀ Լուսավորության նախարարության աջակցությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի օրհնությամբ: Մինչ օրս այստեղ անվճար հիմունքներով սովորում են հայ, տարբեր ազգությունների և տարիքային խմբերի երեխաներ՝ անկախ լեզվի իմացության մակարդակից:

Հատկանշական է, որ կրթական, գիտական և դաստիարակչական գործունեությունից բացի, կարևորվում է ճանաչողական-լուսավորչական միջոցառումների կազմակերպումը: Այդ ամենի շնորհիվ հնարավոր է լինում ամռանը հայրենիքում անցկացնել հետաքրքիր էքսկուրսիաներ՝ այցելել տարբեր ցուցահանդեսներ, թանգարաններ և գրադարաններ, ծանոթանալ հայ մեծերի ստեղծագործություններին, ինչպես նաև նշել Հայաստանի հետ կապված նշանակալի տարեթվերն ու տոները:

Ուսումնական տարվա ընթացքում «Վերածնունդ» դպրոցում իրականացվում են հանդիպումներ բազմաթիվ շրջանավարտների, պաշտոնատար անձանց և իրենց ժողովրդի արժանավոր ներկայացուցիչների՝ հասարակական գործիչների, գիտնականների ու գործարարների, գրողների ու բժիշկների, արվեստագետների ու արտիստների, մարզիկների հետ:

Առաջին տարիներին «Վերածնունդ» դպրոցում սովորել է 40-80 երեխա, իսկ այժմ նրանց թիվը հասել է 200-250-ի: Իր 35-ամյա բեղմնավոր գործունեության ընթացքում կիրակնօրյա դպրոցն արդեն կրթել է մոտ 4000 աշակերտ:

Նման ուրախության ու բարության մթնոլորտում «Վերածնունդ» դպրոցի սաները հայրենասիրական զգացողություններով ներկայացրին գրական-երաժշտական և ազգային պարային գեղեցիկ կատարումներ: Այնուհետև ցուցադրվեց կրթօջախի 2022-2023 ուսումնական տարվա և ամառային արձակուրդների հաշվետու տեսաժապավենները:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՈՒՄ

Ուսանողության մանկավարժական կրթության երաշխիք է ամենից առաջ դասախոսական-առարկայական գործընթացը: Սակայն պակաս նշանակություն չունի ուսանողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: Նման մի օղակ է ուսանողական գիտական կոնֆերանսը, որի անցկացումը դարձել է ավանդույթ, տարիներ շարունակ եղել է մեր բուհական կրթության համակարգի բաղադրիչ:

Տարեվերջին տեղի ունեցավ կոնֆերանս, որ կազմակերպել էր համալսարանի բանասիրական ֆակուլտետի Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը (ամբիոնի վարիչ բ. գ. դ. պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի ղեկավարությամբ):

Մասնակցում էին ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրի մեկուկես տասնյակ ուսանողներ: Նրանք հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով հայ գրականության առավել հայտնի նմուշների լեզվի, առանձնապես բառապաշարի վերլուծությամբ, ինքնուրույն դիտարկումներով: Զեկուցումների թեմաների գիտական ղեկավարությունը հաջողությամբ իրագործել էին ամբիոնի դասախոսները (պրոֆեսորի պաշտոնակատար Գ. Խալաթյան, դոցենտ Ա. Յուզբաշյան, դոց. Ս. Թորգոմյան):

Թեմաները հիմնականում ընտրվել էին հանրակրթական ծրագրային հեղինակների ստեղծագործություններից: Կոնֆերանսը կազմակերպվել էր գրական երկի տեքստի վերլուծությամբ ուսանողի գրավոր խոսքի զարգացմանը նպաստելու նպատակով:

Հետաքրքիր թեմաներ էին առաջին կուրսեցիների զեկուցումները: Ս. Չարչյանը, Ա. Պապիկյանը, Ա. Դավթյանը անդրադարձան Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի բարբառային բառերին, Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության նոր բառերին, Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի լեզվական արվեստին: Հ. Առաքելյանը և Ռ. Հովհաննիսյանը խոսեցին Պ. Դուրյանի «Լճակ» և Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» գործերում հեղինակային լեզվամտածողության մասին: Հ. Սագսյանը բերեց իր մայրենի Գավառի խոսվածքի մի քանի յուրահատկություններ:

Մեծ ուշադրությամբ լսվեցին երկրորդ կուրսի ուսանողներ Ա. Թովմասյանի, Ե. Թումոյանի, Ա. Հարությունյանի զեկուցումները, որոնք վերաբերում էին Հ. Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմի, Ա. Բակունցի «Ծիրանի փող» և Մ. Գալշոյանի «Կանչը» պատմվածքների բառապաշարին:

Բավականին հետաքրքիր էին երրորդ կուրսեցի ուսանողների զեկուցումները, մանավանդ որ դրանք առնչվում էին հայ հին մատենագրական նմուշներին: Օ. Գասպարյանը զեկուցեց «Աղոթքների կառուցվածքի առանձնահատկությունները», իսկ Ա. Կյուրեղյանը՝ «Հրապարակախոսական ոճի արտահայտությունը 5-րդ դարի պատմագրության մեջ» թեմայով: Որքան էլ թեման ծավալուն էր, նյութի ընդգրկումը չափավոր էր և օրինակներով հագեցած:

Չորրորդ կուրսեցիները մեր բուհի այս տարվա շրջանավարտներ են: Ի դեպ՝ Մ. Առաքելյանը և Ն. Հովհաննիսյանը գերազանց նիշով պաշտպանեցին իրենց ավարտական աշխատանքները, որ նաև ֆակուլտետի հաջողության նշան է: Իսկ մինչ այդ նրանք մասնակցեցին կոնֆերանսին իրենց ուշագրավ զեկուցումներով: Մ. Առաքելյանը զեկուցեց Հ. Թումանյանի մանկական բանաստեղծությունների բառապաշարը թեմայով, իսկ Ն. Հովհաննիսյանը ներկայացրեց իր ավարտական աշխատանքի՝ «Լևոն Շանթի պիեսների բառապաշարը և նրա ուսուցումը» թեմայի մի բաժինը:

Գոհունակությամբ պետք է նշել մագիստրոսական կրթական ծրագրով ուսանողուհիներ Գ. Առաքելյանի և Ա. Ավագյանի զեկուցումների մասին: Նրանք կոնֆերանսում խոսեցին մագիստրոսական թեզերի արդիականության, ուսուցման մեթոդիկայի շուրջ. «Մ. Նալբանդյանի հրապարակախոսական երկերի բառապաշարը և նրա ուսուցումը», «Ուսուցչի շարժումների (ժեստերի) դրսևորումները մայրենի լեզվի դասագործընթացում» թեմաները արդիական են, մանավանդ որ նախկինում կա՛մ ամենևին չեն եղել ուշադրության առարկա, կա՛մ դրանց անդրադարձել են մասամբ: Ի դեպ, այդ թեմաների կատարումը պետական քննական հանձնաժողովը ճանաչեց իբրև լավագույն աշխատանքներ:

Վերջում, իբրև ամփոփում, գնահատանքի և խրախուսանքի խոսք ասացին նախ՝ զեկուցողների համակուրսեցիները, այնուհետև՝ ֆակուլտետի փոխդեկան դոցենտ Ն. Խաչատրյանը, Գ. Խալաթյանը, Ա. Յուզբաշյանը, ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա. Գալստյանը:

Ուսանողական կոնֆերանսի աշխատանքը մանրամասն ամփոփեց պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյանը: Նա գնահատեց ուսանողների ինքնուրույն աշխատանքը, հայտնեց նկատառումներ, որոնք կարևոր են ոչ միայն նման զեկուցումների, այլև հետագայում՝ ավարտական և այլ բնույթի գրավոր աշխատանքների ձեռնամուխ լինելու ժամանակ: Ամենավերջում նա, իբրև քաջալերանք, զեկուցողներին նվիրեց իր բոլորովին վերջերս լույս տեսած գիտական աշխատությունը՝ «Հայ միջնադարյան երկլեզվյան բառացանկերի լեզվի քննություն» գիրքը:

Մերի ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի
4-րդ կուրս
Անահիտ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի
3-րդ կուրս

Հանդիպում բանաստեղծի հետ

«Ես նկարում եմ բառերով...»

Հերթական հանդիպումն էր Բանասիրականում, որտեղ ուսանողները պարբերաբար հանդիպում են երիտասարդ, ժամանակակից բանաստեղծների հետ: Հյուրը ՀՊՄՀ 2006 թվականի Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ, նկարիչ-մանկավարժ Պետրոս Հոկտանյանն է, ով գրեթե նկարչությամբ չի զբաղվում, բայց չափածոյի տիրույթում հասցրել է սիրվել իր ասելիքի պարզությամբ ու մատչելիությամբ:

Բացման խոսքը Ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանինն է, ով բանասիրականի ուսանողների համար կարևորում է գիրք կարդալը՝ մեջբերելով անվանի արձակագրի խոսքերը. «...գիրք կարդալը ծով մտնելու նման է, և պիտի հանձնվես տարերքին...»: Վարդգես Պետրոսյանի հերոսն ասում է՝ նոր, լավ գրողներ կան, միակ ելքը գիրք կարդալն է...

1983 թվականին է ծնվել, ավարտել է Տերյանի անվան դպրոցը, այնուհետև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Բանաստեղծը հասցրել է երկու գիրք հրատարակել՝ «Կազինո» և «Մեզանից հետո», պատրաստվում է տպագրել երրորդ գիրքը, բազմաթիվ երգեր են գրվել նրա ստեղծագործություններով:

Հանդիպումը ձևաչափ չուներ. ուսանողական լսարանի հետ անմիջական կապի ընթացքում փորձեցինք ճանաչել երիտասարդ բանաստեղծին: Տաղանդավոր է, չի սիրում բանաձևումներ, անկեղծանում է լսարանի առաջ՝ ակնկալում եմ ջերմ ու անկեղծ հանդիպում... Այդպես էլ եղավ՝ ջերմ ու անկեղծ հանդիպում, ուր հանդիպեցին պոեզիան և երաժշտությունը, և օրվա հերոսը նորին գերազանցություն պոեզիան էր՝ մաքուր ու զուլալ՝ ինչ-որ տեղ սահյանական խոսքի նրբերանգների հյուսվածքով:

Փոխդեկան Նաիրա Խաչատրյանը կարևորեց երիտասարդ գրողների հետ հանդիպումները թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների համար, ապա հետաքրքիր շեշտադրումներով վերլուծեց Պետրոս Հոկտանյանի պոեզիան. «Նա գրում է այնպես, ինչպես ապրում է, և գրում է այնպես, որ ապրեցնի ընթերցողին...»:

Ն. Խաչատրյանի խոսքը դիպուկ էր ու տեղին. «Բանաստեղծի աշխարհը հագեցած է սիրո անուշ հույզով, հայրենիքի երգի ավանդական ու ժամանակակից աշխարհընկալմամբ, խոհական ու փիլիսոփայական բանաձևումներով: Հոկտանյանը խոստովանում է, որ ստեղծագործությունները ծնվում են ըստ հոգեվիճակի, առանց նախնական տրամադրվածության, այնպես աննկատ ու հուշիկ, ինչպես հոգու անկեղծ երգը՝ պահի ազդեցությամբ ու ինքնաբերաբար: Անկեղծությունից ծնված պոեզիան մաքրում է մարդկային հոգին, դարձնում բյուրեղյա ու անսխալ: Առաջին հերթին այն հեղինակին է պետք. այն կորցրածը ետ բերելու, ունեցածը պահելու խիզախությունն է իր մեջ ամփոփում, և զարմանալի չէ, որ առանց երգի նրա կյանքը կանգ կառներ.

Այսօր գրիչս պիտի կանգ առնի,
Ինչպես որ սիրտն է կանգ առնում
հանկարծ...

Նա գիտի նաև ինքնաշտկման բանաձևը.

Ես գիտեմ արդեն ճամփան դրախտի
ու սրբերի հետ նստում եմ սեղան,
Երկինքն է այսօր տերը իմ բախտի,
ում կտակել եմ իմ հույսն ու ներկան...:

Խառն ու խրթին, քաղաքական վայրիվերումներով հագեցած մեր օրերում, երբ «ժամանակը պահանջում է արվեստի ու գրականության քաղաքականացում, Պետրոս Հոկտանյանը կարողանում է զերծ մնալ մոդայիկ ջղաձգումներից, մեզ մատուցելով բանաստեղծական բարձր արժեքներ»,-շարունակում է Ն. Խաչատրյանը՝ փորձելով բացահայտել ժամանակակից բանաստեղծի աշխարհը, որին մոտեցող ընթերցողը հասկանում է՝ «և դրախտն է իրենը, և դժոխքը», և իրենն են «բանաստեղծի բոլոր մոլորակները, ուր ընթերցողը բանաստեղծի հետ «կարողանում է լսել ոտնաձայները հեռացող օրերի»:

«Ձեր բանաստեղծությունները սովորեցնում են սիրել, զգալ»,-ասում է 3-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Աղասյանը, ապագա բանասերները բանաստեղծություններ են ներկայացնում Պետրոս Հոկտանյանի պոեզիայից, ուր հեղինակը խոսում է իր հույզերի, ապրումների ու ընկալումների մասին. «Այսօր չեմ ուզում նկարել ցասում, ցավ ու տառապանք...», «Որ կողմ նայում եմ՝ օտար շենքեր են...», «Տագնապ ներշնչող օտար բարքեր են...», «Մի կյանքը քիչ է սիրելու համար...»:

Դասախոսները և ուսանողները բանաստեղծին ուղղում են հարցեր, որոնք վերաբերում են նկարչությանն ու պոեզիային, ուսուցչին ու մանկավարժությանը...

Գրեթե չեմ նկարում՝ անկեղծանում է Պետրոսը, ես նկարում եմ բառերով...

Սիրում է Տերյան ու Սահյան, իր էությամբ ու ասելիքով ավելի մոտ է Սահյանին, բայց սիրո բարձրակետը Չարենցն է... Մեր օրերում տաղանդավոր գրողներ շատ կան, ցավոք, սոցիալական հարթակներում վատ գրողներն ավելի շատ են. «Գրողը պետք է գրի, դա հոգու ճիչ է, ընթերցողը պետք է գտնի իր գրողին, գրողն էլ՝ իր ընթերցողին... Բանաստեղծությունը հոգևոր վիճակ է, ինձ համար աղոթքի պես մի բան...»,-անկեղծանում է բանաստեղծը՝ փաստելով, որ իրեն ավելի շատ գտնում է չափածոյի մեջ:

«Բանասիրական ֆակուլտետը մեր երկրի համար ստրատեգիական նշանակություն ունի. մեր ուսանողները պիտի լինեն գրագետ, բարեկիրթ, հոգեբան,-ընդգծում է դեկան Աշոտ Գալստյանը,-այսօր ամբողջ աշխարհում ճգնաժամ է, մեր երկրում՝ նույնպես, մանկավարժի համար դժվար է մտնել դասարան... Դուք ևս մանկավարժ եք, ի՞նչ կուզեիք ասել ապագա մանկավարժներին»:

«Մանկավարժն այն մարդն է, որը կրթում է. նա պիտի կրթի նաև իր օրինակով ու կերպարով, բայց նա նաև չգնահատված է...

Եղեք հայապահպան, էական չի՝ որ ոլորտում կաշխատեք, եթե այդպես մտածենք յուրաքանչյուրս՝ մեզ դժվար կլինի հաղթել...»,-ուսանողներին ասում է բանաստեղծը, և որ ամենակարևորն է՝ եղեք քաղաքակիրթ ու նաև հոգեբան...

Ինչ վերաբերում է ներքին վախերին՝ Պետրոս Հոկտանյանը վստահեցնում է ուսանողներին՝ դրանք բոլորը հաղթահարելի են, իսկ ինքը միայն Աստծուց է վախենում...

Ուսանողները մեկ անգամ էլ փորձեցին ճշտել՝ ի՞նչ եք ուզում մարդկանց ասել ձեր պոեզիայով...

«Ես փորձում եմ բանաստեղծությունների միջոցով խոսել, ես ընդամենը խոսում եմ իմ ընթերցողների հետ»,-մեկնաբանեց բանաստեղծը:

«Մա... միշտ գարուն է մեր տանը, բայց մի տեսակ ցուրտ գարուն, դու կաս, դու միշտ կաս, մայրիկ, չնայած քեզ դրախտի ուղեգիր են շնորհել, իսկ ես այս ծուռ աշխարհում շարունակում եմ ենթարկվել ապրելու փորձությանը և լսել ոտնաձայները հեռացող օրերի...»: Կարծես ամեն ինչ ասված է յուրովի գեղեցիկ...

Հանդիպմանը մի առանձին շուք հաղորդեց հեղինակային երգերի կատարող Սրբուհի Սիմոնյանը, ով կիթառով հրաշալի ներկայացրեց Պետրոսի բանաստեղծություններով գրված երգերից՝ նրանց ջերմությամբ ու տաք հնչյուններով լցնելով լսարանն ու ներկաների հոգիները:

Եվ, իբրև ավարտ՝ մեջբերում «Մեզանից հետո» գրքից.

Իմ ամեն օրը՝ պայքար ու նահանջ,
Կարոտի կռիվ, սե՛ր ու երազա՛նք,
Իմ ամեն օրը գույն ունի կանաչ,
Քե՛զ ունի արդեն ինձանից առաջ...

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

«Արվեստագետի առաքելությունը պիտի լինի արվեստին հավատարիմ մնալը, ցանկացած պարագայում»,- մեզ հետ զրույցում ասում է 27-ամյա երգահան, հեղինակ կատարող Հակոբ Թութունջյանը, օրինակ բերելով Պիկասոյին և Մոդիլիանին, ասելով, որ մեկն ապրում էր շռայլության մեջ, մյուսը՝ ոչ այդքան, բայց երկուսն էլ հավատարիմ էին արվեստին:

Երաժշտության հետ նրա կապը վաղ հասակից է ձևավորվել. մայրը ջութակահար է, հաճախ էր Հակոբին իր հետ տանում նվագախմբի փորձերին: «Դեռ մանկուց ես շատ էի սիրում երևակայել ու ինձանից դուրս մի բան ստեղծել, ու այդ ներքին քաղցը հագեցնելու ամենահարմար տարբերակը երաժշտությունն էր»,- պատմում է Հակոբը:

Փոքրուց հաճախել է կիթառի դասերի և իրեն ծանոթ մի քանի ակորդներով մեղեդիներ ստեղծել: Այսօր էլ իր ամենամեծ շարժիչ ուժը արվեստում համարում է երևակայությունը, հետո մնացածը՝ ձայն, կատարողական արվեստ և այլն:

«Ամեն մի երգն ինձ համար մի ֆիլմ է, որտեղ ես և՛ ռեժիսոր եմ, և՛ դերասան, մանավանդ այն երգերը, որոնք քավր չեն, այլ իմ հորինած», - նկատում է երգահանը:

Ավարտել է Երևանի Միքայել Մալունցյանի անվան արվեստի դպրոցը, որտեղ անցել է կիթառի դասարանի ամբողջական դասընթացը: Ապա կրթությունը շարունակել բոլորովին այ ոլորտում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում» բաժնում, բայց մասնագիտությամբ երբեք չի աշխատել: Զուգահեռ նաև սովորել է Երգի պետական թատրոնի վոկալի բաժնում և դասեր ստացել երգչուհի Եվա Սուջյանի մոտ:

Երգարվեստից բացի զբաղվում և գումար վաստակում է այլ գործերով:

«Աշխատանքը շատ կարևոր է մարդու համար, բայց արվեստի մարդը, երբ ուրիշ գործով է զբաղվում, միևնույն է, մտքով ուզում է վեդադառնալ ակունքներին ու տարբեր աշխատանքներով զբաղվելու ընթացքում կարողանում է մեծ պաշար կուտակել արվեստի համար, որովհետև, ի վերջո, դա կյանք է ու մարդկային հարաբերություններ, իսկ արվեստով զբաղվող մարդը շատ նրբանկատ պիտի լինի այս հարցերում»,- ասում է Հակոբ Թութունջյանը:

Երաժշտությամբ դեռ չի վաստակում, երբեք երգը, որպես աշխատանք, չի ծառայել նրան. «Ասել, որ հոբբի է, սխալ կլինի, բայց միշտ համատեղել եմ երաժշտությունը տարբեր աշխատանքների հետ, հույս ունենալով, որ մի օր վերջնականապես կվերադառնամ երաժշտությանը՝ երգելուն»:

Առաջին հեղինակային երգերից մեկը «Հպարտների ծովն» էր, որը գրել է 16 տարեկանում. այդ երգը ձայնագրել է վերջերս՝ իր մասին պատմող ֆիլմի համար, 11 տարի երգը գրված էր, սակայն չէր ձայնագրում: Ֆիլմը կոչվում է «Freedom» (ազատություն): Նրան ռեժիսոր և օպերատոր ընկերներն են օգնել, ամենից շատ՝ Ստեփանը, գաղափարները որոշակիորեն ռեալիզացնելու հարցում:

Տարիքի հետ ճաշակային մեծ փոփոխություններ են լինում. 27 տարեկանում հորինված երգերը խիստ տարբերվում են 17-ում ստեղծածներից, կան շատ մեղեդիներ, որոնց համար դեռ բառեր պիտի գրվեն, ասում է՝ գուցե այս անգամ դիմի պոետների օգնությանը:

Նրա երգարվեստում սերն է և ազատությունը: Հեղինակային երգերից են «Հորինված այս քաղաքում», «Searching love», որը ունի տեսահոլովակ, «Շենքերը փակել են փոշոտ աչքերը», «Ճշմարտախոսը» և այլն:

«Ես չգիտեմ՝ արվեստը ինչպիսին պիտի լինի կամ չլինի, բայց մի բան հաստատ է՝ արվեստը պետք է գեղեցիկ լինի, հոգևոր մեծ պաշար ունենա իր մեջ, կլինի երգ- երաժշտություն, թե ֆիլմ՝ պիտի ապրեցնի քեզ, էմոցիաներով լցնի, որոշակի ջերմությամբ պարուրի հոգին, դա է ամենաարժեքավորը», - ընդգծում է երգահանը:

Նպատակներից մեկն է՝ հերթով ձայնագրել բոլոր ստեղծած գործերը և հաջողված քավրները, իհարկե, լավ գործիքավորողների օգնությամբ, ինչու ոչ՝ նաև մի քանիսը շատ պարզ ձևով, կիթառով, ակուստիկ տարբերակով, ինչպես ի սկզբանե հորինվել է, ցանկանում է գտնել գաղափարակիցներ և ստեղծել խումբ:

«Կյանքի կարգախոս չունեմ, բայց միշտ վստահում եմ ներքին ձայնիս»,- եզրափակեց Հակոբ Թութունջյանը:

Լուիզա ՍԱՐԳՍՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Մի զլացեք կյանքեր փրկել

Մայիսի 26-ին Գառնի-Արտաշատ մայրուղում տեղի ունեցած վթարի հետևանքով չորս պատանի ըմբիշ ստացել էին ծանր մարմնական վնասվածքներ և գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում Սուրբ Աստվածամոր անվան հիվանդանոցում:

Վթարից ժամեր անց Ըմբշամարտի ֆեդերացիան հայտարարություն տարածեց, որ պատանի ըմբիշներին արյան փոխներարկում է անհրաժեշտ, և բոլոր այն մարդիկ, ովքեր կարող են հանդիսանալ դոնոր, առավոտյան 9. 30-ին մոտենան արյան հանձնման կետ:

Առավոտյան Սուրբ Աստվածամոր բժշկական կենտրոնի արյան հանձնման կետում «ասեղ գցելու» տեղ չկար: Ցանկացողների քանակը եռակի գերազանցում էր անհրաժեշտ արյան քանակին: Օդում միասնականություն և կարեկցանք էր զգացվում, բոլորն անհամբեր սպասում էին իրենց հերթին, որ օգնեին իրենց կարիքն ունեցող երեխաներին: Իրարից շատ տարբեր մարդիկ, որոնք առօրյա կյանքում, կարծես թե, ընդհանուր ոչինչ չունեին, միախմբվել էին՝ մեկ տեղում, մեկ նպատակի շուրջ: Ազգությամբ ռուս Իրինան ասում է. «Տելեգրամյան ալիքներից մեկում տեսա, որ դժբախտություն է պատահել, և բոլոր տուժածները իմ երեխայի հասակակիցներն են: Քանի որ Հայաստանն ինձ այսքան ջերմ և հարազատ է ընդունել՝ իմ պարտքն եմ համարում ինչոր ձևով հատուցել այդ բարության համար: Ինձ հետ քաղցրավենիք եմ բերել և խնդրել, որպեսզի փոխանցեն երեխաներին, երբ նրանք արթնանան»:

Արյուն նվիրաբերողների շարքում էր նաև նախկին պաշտոնյա, որը վստահ է՝ յուրաքանչյուրիս պարտքն է անհրաժեշտության պահին թիկունք լինել մեր հայրենակիցներին. «Կյանքից թանկ ոչինչ չկա և դժվարության պահին օգնելով մյուսներին՝ օգնում ենք ինքներս մեզ»:

Զինված ուժերում որպես ռազմական օդաչու ծառայող Արմեն Սահակյանը հաջորդ օրն առավոտյան պետք է մեկներ ծառայության, մինչև հայրենիքը պաշտպանելը՝ նա պաշտպանում է հայ երիտասարդների կյանքի իրավունքը: Պատերազմի ընթացքում իր կյանքը հաջողվել է փրկել դոնորների նվիրաբերած արյան շնորհիվ, և նա ամենքից լավ գիտի՝ ինչ «գին» ունի արյունը:

Արյուն նվիրաբերողներից յուրաքանչյուրն այս քայլին դիմելու իր դրդապատճառն ունի, բայց երբ խոսքը վերաբերում է մարդկանց կյանքը փրկելուն, ապա բոլոր պատճառները դառնում են մեկը:

Ապագա չեմպիոնների վիճակը գնահատվում է ծայրահեղ ծանր, մոտ օրերս նրանց բավականին մեծ քանակությամբ արյուն պետք կգա, և եթե դուք ցանկություն ունեք և համապատասխանում եք նվիրատվության պահանջներին, ապա ընդամենը 15 րոպեն կարող է կյանք փրկել:

Միլենա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ
Հեռուստառադիոլրագրության բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
(դոնոր)

Հ.Գ. Ցավոք, երբ նյութը պատրաստ էր տպագրության, տեղեկացանք, որ երկու ըմբիշի կյանքը փրկել չհաջողվեց:



«Ուշացած խաղաղություն»

«Ես միշտ էլ հստակ իմացել եմ, որ օրերից մի օր հրատարակելու եմ գիրք»,- մեզ հետ զրույցում ասաց «Ուշացած խաղաղություն» գրքի հեղինակ Տաթև Պետրոսյանը: Տաթևը գիրքը գրել է 2020 թվականի սեպտեմբերյան պատերազմի ընթացքում, երբ դեռ ընդամենը 16 տարեկան էր:

«Թուղթն ու գրիչը միշտ ինձ հետ են, մինչ պատերազմը և պատերազմից հետո ևս, ես անդադար գրում եմ, սկզբում իմ առօրյայի, իսկ սեպտեմբերի 27-ից սկսած՝ պատերազմի մասին»,-նշում է հեղինակը:

Տաթևն ասում է, որ երբ մարդկանց մոտ բառերը դառնում են ավելորդ, շատ մարդիկ իրենց մտքերը սկսում են հանձնել թղթին՝ չիմանալով, որ այդ մտքերը կարող են մի օր գրքեր դառնալ: Նա հենց այն մարդկանցից է, որ իր մտքերը հանձնեց թղթին, ու այդ 44 օրերի ընթացքում գրեց հենց 44 էջ: Գիրքը պատերազմից հետո ապրելու և կյանքը վերարժևորելու մասին է:

Շատերը Տաթևին արդեն ճանաչում են որպես սկսնակ գրողի, և ինչպես ինքն է ասում՝ դու արդեն ներկայանում ես որպես սկսնակ գրող և հեղինակ և պետք է շարունակես գրել, քանի որ քո լսարանը սպասում է հաջորդ գրքին:

Շուտով լույս է տեսնելու Տաթևի նոր գիրքը, որը պատերազմի մասին չէ, բայց շատ կարևոր թեմա է 21-րդ դարի երիտասարդության համար. «Իմ գերագույն նպատակը մեր հասարակությանն ապացուցելն է, որ 21-րդ դարում կան այնպիսի մարդիկ, ովքեր հիշում են պատերազմը, կայացած են ու չեն տրվում միայն գումարային հաճույքներին»:

Պատերազմը ստիպեց նրան գիրքը վերնագրել «Ուշացած խաղաղություն», քանի որ պատերազմից հետո հասկացավ, որ մեր ուշացումներն այլևս չեն ներվելու:

«Դպրոցում, երբ ուշանում էի, ասում էի կներեք. ներվում էի, աշխատանքից էի ուշանում՝ ներվում էի, կարևոր հանդիպումներից ուշանալիս՝ պատճառաբանում էի, թե խցանում էր, բայց հետո հասկացա, որ պետք չէ ուշանալ, որովհետև չգիտենք վաղվա օրը ինչ է լինելու», - հավելեց նա: Տաթևի խոսքով, պատերազմը փոխեց նաև իրեն, ու սովորեց գնահատել, ապրել ու արժևորել սերն ու կյանքը, հարազատներին, ընկերներին ու մտերիմներին, անծանոթներին:

«Մեկ-մեկ սիրտս բացատրություններ է պահանջում, իսկ հետո կյանքն ինձ հրամայում է ապրել առանց բացատրություններ փնտրելու, ապրել հանուն նրանց, ովքեր ընկան հանուն մեզ,- ասաց Տաթևը:- Անցան տարիները, ես մեծացա ու հրատարակեցի գիրքս…

Հրատարակեցի ուշացած…

Ցավոք «Ուշացած խաղաղություն» վերնագրով»:

Աննա ԲԱԲԱԼԱՐՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի

«Թանգարանային գիշերը» թանգարանի պատուհանների արանքից

Աշխարհի տարբեր ծայրերում մայիսի 18-ը տոնվում է որպես թանգարանների միջազգային օր: Իսկ ամսվա վերջին շաբաթվա օրերից մեկն ընտրվում է թանգարանային գիշերվա համար:

«Թանգարանային գիշերը» ցուցահասրահները պատկերասրահներն ու ամենահայտնի թանգարաններն ունենում են ազատ ելումուտ: Այս օրը թանգարանները բաց են լինում այցելուների առաջ մինչ ուշ գիշեր: Միջազգային օրը 1977 թվականից սկսած է նշվում ու որոշակի նպատակ հետապնդում՝ համախմբել թանգարանների շուրջ հասարակությանն ու մարդկությանը, արվեստը չտալ մոռացության և բարձրացնել հանրային իրազեկվածությունը:

2005 թվականից Հայաստանում նույնպես նշվում է Թանգարանների միջազգային օրը՝ ամեն տարի յուրահատուկ համախմբող կարգախոս ընտրելով: 2023 թ. Թանգարանների միջազգային օրվա խորագիրն էր «Թանգարաններ, կայունություն և բարեկեցություն», որը ևս մեկ անգամ վերահաստատում է թանգարանների կարևորագույն դերը համայնքների կայուն զարգացման և բարեկեցիկ հասարակության ձևավորման գործում:

Այս ավանդույթը կրթական կարևորագույն նշանակություն ունի և երիտասարդների շրջանում սիրված օր է՝ պարտադիր այցելության համար:

Թանգարանների մշտական այցելու Հեղինե Գրիգորյանի համար միջազգային օրն առանձնանում է, քանի որ ավելի շատ մարդկանց է տեսնում սրահներում, քան սովորական օրերին: «Կարևոր և միաժամանակ հաճելի գործընթաց է թանգարան այցելելը, կարծես հոգուդ արվեստ ես թելադրում»,-նշում է Հեղինե Գրիգորյանն ու ավելացնում, որ և՛ լավ է, և՛ ոչ այնքան՝ տեսնել ավելի շատ զբոսաշրջիկների թանգարանների սրահներում, քան տեղի երիտասարդությանն ու կրտսեր դպրոցականներին:

Գաֆեսճյան արվեստի կենտրոնում, Սերգեյ Փարաջանովի թանգարանում, Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում ու Ազգային պատկերասրահում այս օրերին չի դադարում թե՛ զբոսաշրջիկների, թե՛ տեղացիների հոսքը:

Ի տարբերություն մյուս թանգարանների, «Արարատ» կոնյակի թանգարանն այդ օրն իր դռները բացեց ժամը 19-ին. մարդկանց հոսքն անդադար էր: Այցելուներին դիմավորում էին զբոսավարները, ցույց տալիս տարածքն ու ծանոթացնում պատմությանը: Շրջայցն անցկացվում էր ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Առաջին սրահում հայ նվիրյալների պատմությունն էր, որոնք կերտել, պահպանել ու փոխանցել են հայկական հողի ու արևի ջերմությունը: Սրահը, որ կոչել էին «Եվ ծագում է արևը»՝ ժամանակավոր ցուցադրություն էր թանգարանում:

Ցուցադրված վերջին նմուշներում էր հայկական կոնյակի առաջին դիպլոմը՝ նվաճած 1907 թվականին Ֆրանսիայում և ARARAT-ի վերջին մրցանակը՝ ստացած Ճապոնիայում 2021 թվականի մայիսին:

Ինչպես նշեց թանգարանի աշխատակիցը՝ «Թանգարանները պահպանում ու ներկայացնում են յուրաքանչյուր երկրի մշակութային և գիտական հարստությունը, իսկ «Արարատն» այդ հարստությունների շարքին է դասվում»:

Հաջորդ սրահներում պահվում էին ամենահին կոնյակի ամենամեծ տակառները, որտեղ տակառի տեսքով դրված էին կշեռքներ: Ըստ ավանդույթի, այստեղ նստել են տարբեր երկրներից այցելած նախագահներ և ով ավելի շատ է կշռել՝ իր քաշի չափով կոնյակ է նվեր ստացել թանգարանից:

Թանգարանում են պահվում անվանական տակառներով կոնյակներ, երկրի վարչապետի, նախագահների անուն-ազգանուններով և, ինչպես նշեց աշխատակիցը՝ ամենաթարմ մակագրությամբ տակառը նախագահ Վահագն Խաչատուրյանինն էր:

Անիմացիոն տեսաշարով ցուցադրված էր նաև կոնյակի տակառի պատրաստման բուն գործընթացը, որը հիացրել էր ներկաներին:

Շրջայցի ավարտին օտարազգի զբոսաշրջիկ Սառա Միրին մեզ հետ զրույցում իր հիացմունքն արտահայտեց հայկական կոնյակի, մշակույթի ու մարդկանց մասին:

«Թանգարանային գիշեր»-ից հիացած Սառան խոստացավ՝ ընտանիքի անդամներին անպայման բերելու է Հայաստան:

Լիլիթ ԱԵԵՄՅԱՆ
Հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Մանկավարժության ու գիտության անխոնջ նվիրյալը

Մանկավարժական համալսարանը ծանր կորուստ կրեց. կյանքից հեռացավ կենսաբանական գիտությունների դոկտոր, էկոլոգիայի և կայուն զարգացման համահամալսարանական ամբիոնի պրոֆեսոր Վարուժան Հովհաննիսյանը:

Վարուժան Հովհաննիսյանը ծնվել է 1952 թվականին, 1981 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետը:

1981-1982 թթ. կենսաբանության ուսուցիչ է աշխատել Մասիսի շրջանի Դարակերտ գյուղի միջնակարգ դպրոցում, 1982-1997 թթ. ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող էր, իսկ 1997 թվականից մինչ օրս աշխատում էր հարազատ բուհում:

Մանկավարժական համալսարանում շուրջ 26 տարվա աշխատանքային փորձ, 6 գիրք, 92 հրատարակված գիտական աշխատանք տեղական և միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում, որոնք նրան բերել են միջազգային ճանաչում:

Վարուժան Հովհաննիսյանը զբաղվում էր էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերով, դասավանդում էր հիդրոէկոլոգիա, երկրաէկոլոգիա, կենսոլորտի երկրաքիմիա-երկրաֆիզիկա, էկոլոգիական ֆիզիոլոգիա, արդյունաբերության էկոլոգիա, բնագիտության ժամանակակից հայեցակարգ, էկոլոգիական փորձագիտություն, բնօգտագործման կառավարում և այլն:

Վ. Հովհաննիսյանի կողմից հայտնաբերված գիշաճանճը, միջատաբանական անվանարկման միջազգային ընկերության կողմից անվանվել է «Dilichopus oganesyani» Nebogow, 2004: ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի 036 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտական խորհրդի անդամ էր, Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հանձնաժողովի, Հայ առաքելական եկեղեցու սոցիալական տներում բնապահպանական ծրագրերի փորձագետ:

Բուհի հիմնադրման 100-ամյակի առթիվ ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանի Գիտական խորհրդի անունից Վարուժան Հովհաննիսյանին պարգևատրեց համալսարանի բարձրագույն պարգևով՝ «Խաչատուր Աբովյան» մեդալով:

Վաչագան Հովհաննիսյանն ուսումնամանկավարժական և գիտակրթական ոլորտի փայլուն ներկայացուցիչ էր, ուներ աշխատանքային երկարամյա փորձ ու փորձառություն, աչքի էր ընկնում բարձր պրոֆեսիոնալիզմով ու մասնագիտական որակներով, երիտասարդ կադրերի պատրաստման գործում՝ պատասխանատվությամբ ու նվիրումով:

Նա հավատարիմ էր մանկավարժի կոչմանը, իր ողջ գիտական ներուժն ու հոգու ջերմությունն անմնացորդ տալիս էր ուսանողներին, կրթությանն ու դաստիարակությանը նվիրված բազմաթիվ ուսումնական ձեռնարկները, կենսաբանական և էկոլոգիական խնդիրների իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված նրա գիտամանկավարժական գործունեությունը մշտապես նպաստել է սերունդների կրթության որակի բարելավմանը:

Վարուժան Հովհաննիսյանը վայելում էր բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների սերն ու հարգանքը: Վաստակաշատ մանկավարժի ու գիտնականի հիշատակը վառ կմնա ուսանողական սերունդների, գործընկերների, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և կոլեկտիվի հիշողության մեջ:

Սիրինե ՇՈՂԵՐՅԱՆ
էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2023-2024 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա ընդունելություն

1. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01 (1 տեղ)
2. Սոցիալական հոգեբանություն - ԺԹ.00.03 (1 տեղ)

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 07-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս.թ. սեպտեմբերի 11-ից 14-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ